

## ՀԱԿՈՒՄՆԵՐ

Դպրութա 4 արարուածով

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Օք. օք. Նինա Բատիկեան  
Հիգա Մանուէլեան  
Հիոնորա Պարթեւեան, ուսանողուհի,  
Պք. պլ. Լետն Ալրամեան, ուսանող:  
Միքայէլ Բաղամեան, ինժեներ,  
Հենրիկ Մարգարեան, բժիշկ:  
Գէորգ Խոսհակեան  
Յովիաննէս,  
Գաբրիէլ:  
Ալեքսանդր,  
Աննա, Նինայի աղախինը,  
Հիւրեր, պարերի կառավարիչ և մի ծառայ:

### I ԾՐԸՐՈՒԾՃ

(Հաւ կահատրուած սենեակ: Աջ ու ջախ երկու դրու:  
թեմի խորքում լաւումէ դաշնամուրի ծայն: Աղախինը կարգի  
է բերում սենեակը, Կէսօրից առայ):

ԱՆՆԱ. Մեր օրիորդը այժմ նոր փեսայ է գտել. և շատ  
լաւ է արել: Ի՞նչ միտք կայ ուսանողի վրայ սիրահարուել,  
քանի որ բժիշկ փեսացու կարելի է ունենալ, այն էլ Հենրիկի  
պէս բժիշկ: Ամբողջ ժամանակ այժմ Նինան միայն նրա մա-  
սին է ստածում ու խօսում, նկատելի է, որ բժիշկը մեծ ազ-  
դեցութիւն ունի օրիորդի վրայ:

**ՆԻՆԱ.** (Թողնում է նուազելը եւ երգելով մտնում): Դեռ  
չես վերջացրել, Աննա: Շտապի՛ր, շուտով Հենրիկը կը գայ:

**ԱՆՆԱ.** Սենեակը արդէն կարգի է բերուած:

**ՆԻՆԱ.** Նայիր, տես, եթէ լրագիր է ստացուել, բեր:

**ԱՆՆԱ.** (Գնում է):

**ՆԻՆԱ.** (Քայլում է յետ ու առաջ, շարունակ մտցում  
երգելով):

**ԱՆՆԱ.** (Մտնում է), Դեռ չի ստացուել:

**ՆԻՆԱ.** Ստանալուց իսկոյն բեր:

**ԱՆՆԱ.** Լուս եմ: (Գնում է):

**ՆԻՆԱ.** (Փոքր պատուա): Զը կայ ոչինչ աւելի ձանձրալի  
ու սպանիչ, քան սպասողական դրութիւնը: Իմ վերաբերմամբ  
դեռ աւելի քան ծանր, երբ սրատարով սպասում եմ ցանկալի  
այցելութեան, —սիրածս տղամարդուն: Սպասում եմ անհամբեր,  
յուսալով թերևս այսօրուայ տեսակցութիւնը վստահութիւն  
ներշնչէ նրան խօսելու վերջապէս իր սիրոյ մասին, մի զգաց-  
մունք, որ այսքան քաղցրութեամբ շաղկապում է մարդուն  
կեանքի հետ: (Քայլում է խորհնելով): Սակայն այս ամենով  
հանդերձ, երբեմն ինձ թւում է, թէ աւելի՛ հաճելի է մուալ  
այս քողարկուած ու ձգտուող դրութեամբ, երբ երկուսս էլ  
իրար շատ լաւ ենք հասկանում, միշտ իրար փափագում,  
իրար ձգտում, բայց և չը վստահանում կարեռ խօսքը հնչել:  
Այս շրջանը, այս դրութիւնը աւելի եռանդալից է, աւելի  
յուսատու, այս յոյզերը կրկնակի քաղցր են: Այն ինչ ամեն  
յոյզեր նոուազում են հենց առաջին համբոյրից յետոյ Օրինակ,  
ես չեի կարծում, որ Լոռնից երբ և է կը ձանձրանամ, մինչ-  
դեռ այժմ ես խուսափում եմ նրանից որպէս ժանգից: Նրան  
երկար սիրել անկարելի էր, այն ինչ այժմ ես պատրաստ եմ  
Հենրիկի համար կեանքս տալու: Հենրիկ! Օ՛, ինչե՞ր չէ խոս-  
տանում նրա սէրը: Եւ նա պէտք է ինձ սիրէ:

**ԼԻՌՆՈՐԱ:** (Մտնում է): Բարե՛ւ, Նինա:

**ՆԻՆԱ:** Օծո.... Բարե՛ւ, բարե՛ւ: Այդ բնչպէս է որ:

**ԼԻՌՆՈՐԱ:** Պարապելու ամենեին տրամադրութիւն  
չունիմ այսօր, մենակ նստելն էլ աւելի քան ձանձրալի է,  
մտածեցի քեզ այցելել:

**ՆԻՆԱ:** Շնորհակալ եմ, որ ձանձրոյթի ըռպէներին գոնէ  
մեզ յիշուած ես:

**ԼԻՌՆՈՐԱ:** Դու չը պիտի նեղանաս, պարապմունքներ  
շատ ունեմ:

**ՆԻՆԱ:** Ա՛խ, ըո՞ այդ պարապմունքները:

**Լի՛նՈՐԱ.** Դժբախտաբար այժմ պարապել ևս չեմ կարողանում:

**ՆԻՆԱ.** Հասկանհամ եմ, հասկանում, ինչ գօրութիւն է մաքերդ ցըռում:

**Լի՛նՈՐԱ.** Նու, նինա:

**ՆԻՆԱ.** Ոչի՞նչ: Հենրիկն այնպիսի տղայ է, որ արժէ նրա պատճառով փոքր ինչ վիշտ ունենալ:

**Լի՛նՈՐԱ.** Վիշտ: Աստուած չանէ:

**ՆԻՆԱ.** Նու, ասենք թուլութիւն դէպի նա: Բայց տես, մենք չը կոուինք նրա պատճառով:

**Լի՛նՈՐԱ.** Դժւ: Ոչ, դու կեռնին չես թողնիլ:

**ՆԻՆԱ.** Կարծիւմ ես: Հաւատացի՛ր, որ նրան պատահել անգամ չեմ ուզում:

**Լի՛նՈՐԱ.** Ի՞նչ եմ լսում: Ի՞նչ է պատահել որ:

**ՆԻՆԱ.** Առանձին ոչի՞նչ: Միայն այժմ ես նրանից բոլորովին ձանձրացել եմ: Ես կամենում եմ սիրուել, սիրել, ածուսնանալ և որոշ դրութիւն ունենալ, այն ինչ նրա հետ... նա դեռ ուսանող է, երկու տարի ևս պիտի սովորէ, իսկ յետոյ էլ յայտնի չէ ինչ ապագայ, հասարակական ինչ դիրք կունենայ:

Խօսք տալ ու անորոշ դրութեամբ այսքան երկար սպասել իմ խելքին մատչելի չէ: Նա շուտով իր ուսաման պիտի երթայ, իսկ ես ստիպուած ծնողներիս մօտ պիտի մնամ: Ո՞վ կարող է երաշխաւորել, որ ամիսներով իրարից բաժան կը շարունակէ նա ինձ սիրել: Այլ բան է եթէ ես հնար ունենայի հետը գնաւու: Ո՞չ, անխոնեմութիւն է այս, ասում եմ քեզ:

**Լի՛նՈՐԱ.** Բայց երբ իրար փոխադարձաբար սիրում էք:

**ՆԻՆԱ.** Փօխադարձաբար: Ոչ, ես նրան չեմ սիրում, նա իմ ձաշակով չէ, այլապէս այսքան շուտ չէի ձանձրանալ ես նրանից:

**Լի՛նՈՐԱ.** Զարմանում եմ: Բայց դու խօսել ես հետը:

**ՆԻՆԱ.** Ինքը շատ լաւ է հասկանում: Ես ևս կասեմ, ի հարկէ, կը բացատրեմ ամեն բան:

**Լի՛նՈՐԱ.** Իսկ ինչ էիր ասում Հենրիկի մասին:

**ՆԻՆԱ.** Հենրիկի մասին: Ախ, ոչի՞նչ: Հանար էի անում:

**Լի՛նՈՐԱ.** Գուցէ մի բան կայ. Վերջերս շատ էք միասին լինում:

**ՆԻՆԱ.** Հանգիստ եղիր, դէպի նա ես առանձին հետաքըրքը քըրութիւն չունիմ: Թերևս նա անտարբեր չէ դէպի ինձ, սակայն այդ դէպըում ես ի՞նչ մեղաւոր եմ որ: Բայց դու կարծում ես նա քեզնով հետաքըրքը ունիմ է:

**Լի՛՛ն՛՛ՌԱ.** Նա ինձնով հետաքրքրում էր խիստ նկատելի կերպով, սակայն վերջերս աչքի է ընկնում նրա զսպուած վերաբերմունքը դէպ ինձ:

**Նին՛Ն.** Նշանակում է մի ուրիշը առաւելութիւն է ձեռք բերել և աւելի զրաւել նրա ուշադրութիւնը:

**Լի՛՛ն՛՛ՌԱ.** Սակայն ոչ դու, չե՞:

**Նին՛Ն.** Քեզ ասում եմ այժմ իմ ցաւերը այնքան շատ են, որ նրան առանձին ուշադրութեան առնելու հազիւ ժամանակ ունիմ: Ինչ նրան իրան է վերաբերում, դրան երաշխաւորել ես չեմ կարող: Այդ նրա գիտենալու բանն է:

**Լի՛՛ն՛՛ՌԱ.** Այդ նրա զբացմունքին է վերաբերում, ի հարկէ: Սակայն առաջարկութեան դէպքում դու նրան չես մերժիլ, մանաւանդ երբ այժմ կենսին այլ ես չես սիրում:

**Նին՛Ն.** Նոր, դժուարանում եմ պատասխանել: Նա լաւ տղաւ է, խելօթ, կրթուած. բայց կարծես նա էլ իմ ճաշակին չէ համապատասխանում: Նա սիրում է ամեն քայլափոխում փիլսոփայութիւն անել, իսկ ինձ ցանկալի է, որ ինձ սիրող մարդը բացի ինձ ուրիշ ոչինչ չը տեսնէ, որ ես նրա մտքի ու սրտի միակ պատկերը լինիմ, միակ իղեալը: Բայց դու կարծես նրանով շատ ես գրաւուած:

**Լի՛՛ն՛՛ՌԱ.** Եւ համակրում ես նրան, իսկ այս համակրանքը իմ մէջ միայն հաճելի երևոյթ կարող է նկատուել, ուրիշ բարդ եզրակացութիւններ մի անիլ (Շարժում է զնալու):

**Նին՛Ն.** Ինչու ես շտապում: Նորից պարապուանքներ:

**Լի՛՛ն՛՛ՌԱ.** Շատապելու իսկապէս ոչինչ չունիմ, կարող եմ փոքր էլ մնալ, եթէ միայն ժամանակդ չեմ խլում:

**Նին՛Ն.** Ա՛, ինդրեմ: (Նայում է ծոցի ժամանցոյցին:) Ժամանակ գեռ ունիմ:

**Լի՛՛ն՛՛ՌԱ.** (Կըրկին նստում է): Ուրեմն կերնի հետ հասարակութեան մէջ այլես չեմ երևալ:

**Նին՛Ն.** Ամենսին: Ես կաշխատեմ որքան կարելի է շուտ վերջ դնել այս ամեն պատմութեան: Ճիշտն ասած, նոյն իսկ անպատուաբեր է այսպէս գաղանի սիրել, սիշտ զգոյշ, մի գուցէ նկատուի: Կայ մի շրջան, երբ այս գաղտնի հայեացքները, ժամադրութիւնները, փսփոցները մի բան արժեն, սակայն այժմ դրանք մեզ պէս հասունների համար աւելի քան ծիծաղելի ու ձանձրալի են:

**Լի՛՛ն՛՛ՌԱ.** Ցաւալի է, անխիթար: Մարդ ծանօթանում է, սիրում, կապւում մէկի հետ, ապա թէ նոր միմիայն զգում. կամ

հաշում, որ իրանք համապատասխան զոյդ չեն, եւ առաջ մի շարք անախորժութիւններ:

Նինվ. Ես հենց սկզբից էլ կը ունի մէջ մի արտակարգ առաւելութիւն չեմ գտել, և երբէք գոհ չէի:

Լի՛՛նՈՐԱ. Այդ դէպում քեզ ներել չի կարելի այդ աստիճան մերձ յարաբերութիւն սկսելուդ համար:

Նինվ. Այլ կերպ վարուել չէի կարող, երբ պարզ զգում էի թէ ինչ աստիճան տեղ ունեմ բռնած նրա սրտի խորքում: Խեղճը շատ էր տանջում: Այն օրերին նա իրան բոլորովին մոռացած էր և ես երկիւղ էի կրում անզամ, որ նրան որևէ գժբաղդութիւն, վտանգ պատահի:

Լի՛՛նՈՐԱ. Իսկ ես հաւատացած էի, որ դու նրան սիրում ես: Գոնէ դու այդպէս էիր ասում:

Նինվ. Ուրիշ ի՞նչ ասէի: Երբ թոյլ եմ տալիս այսքան մերձ յարաբերութիւն, պէտք է և ասել, որ նրան սիրում եմ: Վերջապէս ես չէի կամենում, որ նա կասկածէր, այդ նրա համար մահ կը լինէր:

Լի՛՛նՈՐԱ. Իսկ մեժմ:

Նինվ. Այժմ ոչինչ: Համբոյրներից տղամարդիկ աւելի շուտ են յագենում: Այժմ նա հտնպատութեամբ ինձ կը թողնէ: Վերջապէս ես ի՞նչ մեղաւոր եմ: Թող համապատասխան պայմաններ ստեղծէ, այն ժամանակ ես ուրախութեամբ հետը կամուսնանամ և միասին կերթանք: Այն ի՞նչ այժմեան պայմաններում ես ինչպէս վստահ լինեմ, որ նա Մուկրայում մի ուրիշը չի գտնիլ, եթէ ի հարկէ մինչև այժմ չունի: Ժամանակակից տղամարդկանց վստահանալը միամտութիւն է: Հանդէս եկաւ մի հարուստ հարսնացու, նա իսկոյն կը թողնէ ինձ և նրան կընտրէ: Տղամարդկանց համար այդ պատասխանատու կամ անպատուաբեր քայլ չէ, այն ի՞նչ նման դէպերում մեր վարքը աւելի է ընկնում, իբրև մերժուածի:

Լի՛՛ՉԱ. (Ուրախ ժամանակ ներս է մննում, առանց հանուելու):

Նինվ. Ամ....: Է՛լզա:

Լի՛՛ՉԱ. Դու էլ այստեղ ես, Լիոնո՛րա: Բարե, բարե: (Բարենում է):

Նինվ. Հընում ես, ի՞նչ կայ որ:

Լի՛՛ՉԱ. Նորութիւն: Բայց աշխատէք ինքներդ գուշակել:

Նինվ. Սիրահարութիւն:

Լի՛՛նՈՐԱ. Իսկ նինան պատրաստ է ամեն ուրախութիւն: Սիրահարութեան մէջ գտնել անպատճառ:

**ԼիջԱ.** Եւ չի սիմալում: Ես նշանուած եմ:

**Լի՛ՌՈՐԱ.** { Ինչպէս:

**ՆԻՆԱ.** { Միքայէլի՞ հետ:

**ԼիջԱ.** Այս, Միքայէլի հետ: Երեկ ես առաջարկութիւն ստացար:

**ՆԻՆԱ.** Այժմ որ կարող ես երջանիկ լինել:

**ԼիջԱ.** Ի հարկէ: Այժմ հազիւ թէ կարող եմ հանգիստ ապրել:

**Լի՛ՌՈՐԱ.** Վաղուց ուրեմն երազում էիր:

**ԼիջԱ.** Մի քանի ամիսներ շարունակ Դու Միքայէլին հաւանում ես, Լիոնորա: Նինան գոն է, գիտեմ արդէն:

**ՆԻՆԱ.** Ինչը գոն չը լինեմ: Երիտասարդ, համալսարանական, ապահով պաշտօնում, ուրիշ թնջ ես կամենում:

**Լի՛ՌՈՐԱ.** Ես նրան մօտ ծանօթ չեմ և նրա մասին առանձին ոչինչ ասել չեմ կարող: Սակայն շատ ուրախալի է, երբ իրար սիրում էք:

**ԼիջԱ.** Ի հարկէ սիրում ենք: Վաղուց նկատելի էր, որ նա անտարեր չէ դէպի ինձ, սակայն զարմանալի յամառութեամբ նա ձգձգում էր, մինչեւ երեկ վերջապէս առաջարկութիւն արաւ: Ես համաձայնութիւնս յայտնեցի, խնդրելով այսօր գալ մերոնց հետ խօսելու:

**ՆԻՆԱ.** Զերոնք բոլորն էլ ուրախ կը լինեն:

**ԼիջԱ.** Այս, մերոնք նրան հաւանում են: Ես իսկապէս երեկ էի կամենում գալ հաղորդելու: Բայց ճիշտն ասած սիրու չէր տալիս նրանից ոչ մի բոլէ բաժանուել, իսկ նա գնաց շատ ուշ: Այժմ հազիւ մի փոքր ժամանակ գտայ այստեղ վազելու և պէտք է իսկոյն դառնամ, նա երկի շուտով մեղ այցելութեան կը գայ:

**ՆԻՆԱ.** Երջանկութիւնից աչքերդ փայլում են:

**ԼիջԱ.** Է՛, գո՞ւ էլ...

**Լի՛ՌՈՐԱ.** Ինչը չէ: Երբ սիրում է, պարզ է որ երջանիկ պիտի լինի:

**ԼիջԱ.** Բայց այժմ գնամ, յետոյ կը խօսենք:

**Լի՛ՌՈՐԱ.** Իսկ դու գիտես մի այլ նորութիւն, Լիզա: Նինան մերժում է Լևոնին:

**ԼիջԱ.** Միթէ:

**ՆԻՆԱ.** Դժբաղդաբար պայմանները ստիպում են այդպէս վարուել:

**ԼիջԱ.** Պայմանները ստիպում են նրան այլ ևս չը սիրել:

**Լի՛ՌՆՈՐԱ.** Սկզբից էլ արդէն նրան չէ սիրել. թէպէտ այդ խոստովանում է նոր միայն.

**ՆԻՆԱ.** Այսպէս թէ այնպէս, ես նրան այժմ չեմ սիրում:

**Լի՛ՌԱ.** Այդպէս էլ սպասում էի. մէկին երկար սիրել դու չես կարող ծը տեսութիւն: (Բարեւում, գնում՝ է.)

**ՆԻՆԱ.** Ըը տեսութիւն: (Մինչեւ դուր ուղեկցում, ապա դառնում, նստում է.) Այսպէս, ուրեմն էլզան ամուսնում է: Իսկ դու էլ հենց միայն սէր ու սէր ես շեշտում: Ի՞նչ սէր, ինչ սիրահարութիւն: Իրականութիւնը այն է, որ Միքայէլը սիրահարուել է նրա օժտի վրայ: Հասարակ բան չէ 50,000 բուբլին:

**Լի՛ՌՆՈՐԱ.** Կարծնեմ ես:

**ՆԻՆԱ.** Առանց այլնայլութեան: Այլապէս ինժենէր Միքայէլը ինչո՞ւ պիտի սիրահարուի էլզայի վրայ, որ գիմնազիան աւարտել անդամ չը կարողացաւ:

**Լի՛ՌՆՈՐԱ.** Գիմնազիա աւարտելու անդայման կրթութեան գրաւական չէ, բացի այդ նայած թէ այդ համալսարականը ինչ հայեցք ունի կանանց կրթութեան, կանանց դիրքի մասին, Վերջապէս էլզան անհամեմատ գովելի ու բարձր էակ է և անպայման լաւ կին կարող է լինել:

**ՆԻՆԱ.** Ամեն ինչ դու այլ կերպ ես հասկանում ու բացատրում: Ես Միքայէլին լաւ եմ ճանաչում և հաւատացած եմ որ եթէ էլզան հարուստ օժիտ չունենար, Միքայէլը նրան չէր նկատիլ:

**Լի՛ՌՆՈՐԱ.** Թերևս Միքայէլն հարստութիւնը ի նկատի է առել, սակայն այսպէս թէ այնպէս, նա այժմ սիրում է էլզային, ուստի և կամենում է կապուել նրա հետ:

**ՆԻՆԱ.** Այդ էլ կարելի է հերքել: Դու մեր կեանքը լաւ չես ճանաչում: Դու դեռ գաղափար չունես ամուսնութեան այն առևտուրի մասին, որ կատարում է մակերների շնորհիւ: Հենց այս է ամենամեծ առիթը, որ ես կասկածով ես վերաբերում և՛ լւոնին, ուստի և կամենում եմ մերժել նրան, նախ բան նա կը մերժէ ինձ, որև է պատահական հարուստ հարմացուի դիմաց:

**Լի՛ՌՆՈՐԱ.** Իրաւացի ես խօսում: Այդ ցոյց է տալիս, որ կեանքին շատ հեռատեսութեամբ ես նայում: Սակայն չմոռանաս, որ այդ ամեն պատմութեան հիմքն ու կապը սէրն է, իսկ սիրոյ շրջանում զգացմունքը, սիրածին տիրանալու փափազը այն աստիճան հզօր է լինում, որ սիրող մարդը ստիպուած է լինում թէկուզ հենց կոյր աչքերով սիրածին ձգտել, նրա ետևից՝

քարշ գալ, ինչքան էլ բանականութիւնը ընդդէմ է, մինչև կամ խորտակում է այդ ճանապարհին, կամ թէ նպատակի հասնում: Եւ եթէ այդ կանոն դէպի քեզ իսկական սէր է տածում, հազիւուրեմն մոլորուի իր սիրոյ ճանապարհին:

ՆԻՆԱ. Իսկական սէր: Հարցի ամենահետաքրքիր կողմը հենց այդտեղ է: Ես այս ամենը անուանում եմ ժամանակաւոր հաճոյքներ: Նրան հաճելի էր իւր ամառային ժամանակը իմ ներկայութեամբ անցնել, իսկ ինձ փոխադարձարար ուրախալի էր նրա սիրող շնչի տալ զովանալ: Այս ամեն պատմութեան ժամանակ ես ամենեին չեմ մտածել ամուսնութեան մասին, ոչ էլ այդ նպատակը ունեցել, որովհետեւ ոչ մի պայման չէր համապատասխանում այդ քայլին: Իսկ սպասել մինչև նա կաւարտէ, կրկնում եմ, անխոհեմ է, կրկնակի միամտութիւն:

ԼԻՌԱՌԱ. Նա ինչպէս կը լսէ այդ ամենը, ինչ ես կարծում:

ՆԻՆԱ. Եթէ բանականութիւն ունի, ինձ հետ միասին պիտի համաձայնուի, որ կարենոր է այս ամառային պոյէզիային վերջ գնել երկուական բարի կամքով հենց այժմ իսկ, նախ քան ժամանակը կը սկսէ բաժանել մեզ իրարից մոռացութեան բողով:

ԼԻՌԱՌԱ. Թերևս նախանձելի է, Նինա, որ կարողանում ես ամեն ինչ այդ աստիճան սառնասիրտ հեռատեսութեամբ քննել:

ՆԻՆԱ. Այլ կերպ ամօթ կը լինէր: Գիմնազիական միամտութիւն էր, որ օդային համբոյրների պատճառով անքուն զիշերներ էինք անցնում: Մանկական միասիտ յոյզեր էին, որ հրճում, ոգկորում էինք, երբ մի գիմնազիստ մեզ վարդ էր բերում, կամ մինչև դպրոց մեզ ուղեկցում, դպրոցից էլ տուն տանում: Կամ թէ աշքներիս նայում ու ձեռներնիս ամուր սեղմում: Ցիշում ես, նման անմեղ դէպքեր իրար պատմելու համար գլուխ էինք պատում: Այժմ սակայն դրանք անցան: Այն յոյզերը կորցրել են այլ ևս իրանց արժէքը: Այժմ աւելի լուրջ ձգտումներ կան,—ձգտում, որոշ ու լաւ դիրքի համելու, ընտանիք կազմելու: ձգտում, կեանքում մի ընկեր ունենալու, որ երջանկութիւն ստեղծէ մեզ համար, որ միջոց ունենայ մեր ճաշակի, մեր պահանջի համեմատ կեանք ստեղծելու: Ահա ինչ ճանապարհի վրայ ենք կանգնած մենք այժմ:

ԼԻՌԱՌԱ. Դու կարող ես այդ ամենը հանգիստ հաշուի առնել, մտածել, ու ասել: Կարող ես, ի հարկէ, որովհետեւ յաճախակի սիրահարուելի քեզ յագեցրել, բթացրել է և այժմ քո մէջ սիրոյ եռանդը համար սպառուել է: Սակայն ես այլ անձնաւորութիւն եմ և այլ ձգտում ունիմ: Ես կամունանամ

միայն ինձ սիրող էակի հետ, սիրելով փոխադարձաբար նրան և կատարեալ համոզուած, որ ինձ վստահացած անձնաւորութեան գլխին ես աւելորդ բեռ չեմ լինիլ, այլ կեանքի մի գիտակից ընկեր։ Այլապէս ոչ մի ընարութիւն։

ՆԻՆԱ. Դու ուսանում ես Եւրոպայում, Լիոնորա, և գրքերի ազդեցութիւնը ուժեղ է ձայնում քո մէջ։ Սակայն իրական կեանքը վերջ կը դնէ քո միամտութեան և կը զգաս, որ ժամանակակից կեանքում երջանիկ ապրելու համար չոր ու ցամաք սէրը բաւական չէ։ Այդ որոտընդուստ սէրը կը սկսէ հալուել հենց այն առաջին վայրկեանից, երբ վարած կեանքդ համապատասխան չի լինիլ քո կրթուած ճաշակին, քո մեծացած պահանջին և երևան կը գան մի շարք հոգսեր, մի խումբ վշտեր։

ԼԻՌՆՈՐԱ. Սիրոյ գիտակից զգացմունքի տակ, քո մտքին ու սրտին համապատասխանող էակի ընկերակցութեամբ, ամեն աւելորդ պահանջ տեղի կը տայ կարևորագոյնի և այսպիսով կը ստեղծուի մի ընտանիք, որ կեանքի հետ շաղկապուած կը մնայ ամենազիտակից կերպով, միշտ պարզ հաշուի առնելով այն նպատակը, որ գոյութեան մէջ իրեն բանական էութիւն, պարտքի ձեռով քո վրայ ես ընդունելի ես բուրժուա ու կոմֆորտ կեանքի հակումներ ամենակին չունիմ, ընդհակառակը ձգտում եմ համեստ ու պատուաւոր կեանքի, երբ եւ միջոց կունենամ կատարելու հասարակութեան վերաբերմամբ ինձ վրայ դրած պարտականութիւնը՝ տայ հասարակութեան պատուաբեր ընտանիք ու կրթուած սերունդ։ Կեանքի մէջ այս իդէալն է կայուն և պատուաբեր, մանաւանդ մի մօր վերաբերմամբ, միւս բոլոր շքեղութիւնները ժամանակաւոր և ամեն րոպէ վտանգի ենթակայ. մի ամենաթեթև քամի կարող է սրբել, տանել այդ ամեն ոչնչութիւնը։ Քո ալդ ձգտումներդ կը խորտակուեն հենց այն առաջին բոպէին, երբ տարիքդ կուլ կը տայ դէմքիդ հրապոյրը, երիտասարդութեանդ աշխոյժն ու եռանդը և դու կը դադարես այլ ևս սալօնի զարդ լինել։ Այնունետեւ վայ քո օրին, երբ ետ քաշուելով, կը զգաս, որ քո չը սիրած ամուսնու ընկերակցութեամբ կրկնակի մենակ ես։

ՆԻՆԱ. Միիթարիչ գոյներով չես նկարագրում կեանքը, Լիոնորա։ Սակայն իրականութեան մէջ ամեն դժուարութիւն կարելի է հարթել, իսկ սէք դէպի ամուսինդ ժամանակը ինքը կը ծնէ, մանաւանդ որ ես երբէք զգուելի կամ ատելի ընտրութիւն չեմ անիլ։

ԼԻՌՆՈՐԱ. Այն սէրը, որ հաշիւների վրայ է հիմնուած, կը

գումատուի ամեն մի հասարակ բշտիկից, որոնք ամուսնական կեանքում անթիւ են:

**ՆԻՆԱ.** Բայց և մի մոռանալ, որ ամուսնութիւնը ինքը հիսութափութիւն է, իսկ սիրահարութեան վրայ կառուցած ամուսնութիւնը կրկնակի հիսութափեցուցիչ է լինում, որովհետեւ այդ դէպքում գործում է միմիայն զգացմունքը, առանց բանականութեան փոքրիկ նշոյլի:

**ԼԻՌՆՈՐԱ.** Խնչու միայն զգացմունք: Ընդհակառակը գիտակցական սիրոյ շրջանում բանականութիւնը կրկնակի դեր է խաղում:

**ԱՆՆԱ.** (*Մտնում է*): Պարոն Լևոնը հարցնում է:

**ՆԻՆԱ.** Խնդրիր:

**ԱՆՆԱ.** (գնում է):

**ԼԻՌՆՈՐԱ.** Իմ ներկայութիւնս աւելորդ է, գնամ քանի ինքներդ չեք ասել:

**ՆԻՆԱ.** Իշխը պարտէզ և սպասիր ինձ, ինդրում եմ:

**ԼԻՌՆՈՐԱ.** (Դուրս է գնում հակառակ դունով):

**ՆԻՆԱ.** Սատանան գիտէ, թէ ինչ պէտքէ անեմ:

**ԼԵՒՈՆ.** (*Մտնում է*): Ցուսով եմ չը խանդարեցիր: (*Քարեւում են*):

**ՆԻՆԱ.** Խնդրեմ: (*Նստելու տեղ է ցոյց տալիս:*)

**ԼԵՒՈՆ.** Նորից մոայլ և այդ աստիճան սառնասիրու Նինա, շատ պարզ է այժմ, որ դու կատարեալ փոխուել ես իմ վերաբերմամբ, չը նայած որ յամառութեամբ հակառակն ես պնդում: Ես եկել եմ այսօր վերջին անգամ քեզ խնդրելու, որ խնդիրը պարզես:

**ՆԻՆԱ.** *Միթէ՞ քեզ համար պարզ չէ, Լևոն, որ այս խիստ դրութիւնը, մեր այս անյարմար պայմանները ինձ համար ցաւերի ահագին պաշար են: Խնչպէս՝ ուրեմն անտարբեր մնամ:*

**ԼԵՒՈՆ.** Զը գիտեմ ի՞նչ պայմաններ են քեզ այդչափ անհանդատացնում և այն՝ ինչնու միմիայն այժմ, երբ մենք այլ ևս այսչափ սերտ կապուած ենք իրար հետ, երբ մեր յարաբերութիւնը աւելի պարզուել լաւացել է:

**ՆԻՆԱ.** (*Հեղնական*): Լաւացել, պարզուել:

**ԼԵՒՈՆ.** *Միթէ՞ հչ: Խօսիր պարզ:*

**ՆԻՆԱ.** *Ոչինչ նոր ասելիք չունեմ: Ես սիրելով մէկին, անձնատուր եմ լինում նրան ամբողջապէս և կամենում եմ, որ և ինձ էլ նոյնչափ սիրեն, միշտ ինձ հոգատար ու ինձնից անբաժան: այն ինչ դու ինձ շուտով պէտք թողնես ու հեռանաս:—*

**ԼԵՒՈՆ.** *Թողնել է ուրեմն ուսանելը:*

ՆԻՆԱ. Ո՞վ կարող է երաշխաւորել, որ այս բացակայութեան ժամանակ դու չես մոռանալ ինձ և մի ուրիշին սիրել, ինչ կը լինի այդ գէպքում իմ դրութիւնը:

ԼԵՒՈՆ. Երբ քեզ խօսք եմ տալիս, նշանակում է ես շատ լաւ գիտակցում եմ, թէ ինչ պարտականութիւն եմ վերցնում ինձ վրայ:

ՆԻՆԱ. Կան դէպքեր, երբ յանձն առած պարտականութիւնը կորցնում է իւր կարևորութիւնը, երբ տուած խօսքը կատարեալ բեռ է դառնում: Խսկ այս տեսակ դէպքերում՝ տուած խօսքը կատարելը աւելի քան մեծ յիմարութիւն է:

ԼԵՒՈՆ. Ամենամեծ յիմարութեան դէպքում ևս անհրաժեշտ է կատարել տուած խօսքը, յանձն առած պարտականութիւնը:

ՆԻՆԱ. Իմ վերաբերմամբ կատարած մի այդ տեսակ պարտականութիւն ինձ համար աւելի քան անտանելի է, վիրաւորական: Երևակայիր, վաղը դու պատահես մի առաւելագոյն էակի, որին աւելի շատ սիրես քան ինձ, բայց քեզ զսպես և կատարես ինձ տուած խօսքդ, այսինքն ամուսնանաս ինձ հետ, թէ կը լինի իմ դրութիւնը այդ գէպքում, միթէ աւելի պատուաբեր ու խոնեմ չէ տուած խօսքը ետ առնել: Զէ՞ որ նման դէպքում սիրոյ փսխարէն իրար համար աւելորդ ու ձանձրափ բեռ կը լինենք:

ԼԵՒՈՆ. Հարցը շատ նուրբ կերպով ես շոշափում, սակայն մի մոռացիր ամենակարեւոր կէտը, այն, որ պարտականութիւն յանձն առնող մարդը, սիրելով մէկին, հազիւ է ազդւում մի երկրորդից:

ՆԻՆԱ. Եթէ միայն սիրոյ այդ զգացմունքին սահման դնել կարելի լինէր:

ԼԵՒՈՆ. Սակայն մենք ունենք մի աւելի լաւ միջոց—նշանուել, ամուսնանալ: Ինչու չես կամենում: Խօսիր ծնողներիդ հետ:

ՆԻՆԱ. Աւելորդ բանակցութիւններ են, Նրանք ոչ մի կերպ չեն համաձայնուիլ, քանի դու ուսանող ես և ոչ մի հասարակական դիրք չունես: Խսկ խօսք տալ և սպասել նոյնպէս անպատակ է, քանի որ քեզ ևս յայտնի պիտի լինի, որ եթէ վաղը մի ուրիշ յարմար փեսացու հանդէս եկաւ, ծնողներս ստիպամբ ինձ առաջ պիտի մղեն:

ԼԵՒՈՆ. Սիրող էակին դժուար չէ ամեն խոչնդուաներ վանել սիրածին սպասելու: Այլ բան է, եթէ քեզնից լսեմ, որ դադարել ես ինձ սիրելուց:

ՆԻՆԱ. ? !

ԼԵՒՈՆ. Դժբաղտաբար այդ պատահել կարող է և շատ քնական: Ասա, որ այժմ ես գունատուել եմ քո աչքում և ես առանց այլկայլութեան, առանց քեզ թեթև անախորժութիւն պատճառելու, առանց քեզ մեղաղբելու կը թողնեմ ու իսկոյն կը հեռանամ:

ՆԻՆԱ. Ես ուրիշ ոչ ոքի չեմ սիրում, բայց և կատարեալ աննպատակ եմ գտնում խօսք տալ, առանց հաստատ իմանալու, թնչ կարող է վաղը պատահել, երբ կերթաս այլ շրջան, իսկ ես կը մնամ այլ շրջանում:

ԼԵՒՈՆ. Կրկնում եմ, Նինա, պնդիր ծնողներիդ մեր ամուսնութեան մասին, ապա մենք միասին կերթանք սովորելու:

ՆԻՆԱ. Շատ հրաշալի կը լինէր, եթէ միայն միասին գնալու կարեւոր աիջոցներ ունենայինք:

ԼԵՒՈՆ. Մեր ունեցած միջոցները մեզ կը բաւականանա-  
յին, եթէ միայն դրական կամք ունենաս և համաձայնուիս հա-  
մեսա կեանք վարել:

ՆԻՆԱ. Այդպէս հեշտ ոգևորուել և այս անապահով պայ-  
մաններում գործել, լաւ ապագայ չի տալ մեզ: Մնում է սպա-  
սել մինչև դու կաւարտես, և եթէ կը շարունակես դեռ ինձ  
սիրել, ես ուրախութեամբ քեզ կընդունեմ:

ԼԵՒՈՆ. Այդ շատ է կրկնուել արդէն, Սակայն այժմ ինձ  
այլ հոտ է փշում: Ամեն դրական ելք ու լուծում կախուած  
է միմիայն պարզ ու անկեղծ խոստովանութիւնից և դու պար-  
տաւոր ես վերջնականապէս ինձ պատասխանել՝ սիրում ես  
ինձ, կայ քո մէջ հակում դէպի ինձ այն աստիճան, որ կարող  
լինես այս երկու տարին, մինչև իմ աւարտելը, կռուել ամեն  
խոչնդուների դէմ և ինձ սպասել: Պատասխանիր, խնդրում եմ:

ՆԻՆԱ. Այդքան եռանդ, այդպիսի կամք ես հազիւ ունե-  
նամ:

ԼԵՒՈՆ. Ուրեմն դու ինձ չես սիրում:

ՆԻՆԱ. ? !

ԼԵՒՈՆ. Այդ դէպում ի հարկէ մեր ճանապարհները բա-  
ժանեւում են: (Խանգնում է):

ՆԻՆԱ. Ցաւում եմ, սակայն ստիպուած եմ աննպաստ պայ-  
մաններին զիշանել:

ԼԵՒՈՆ. Ոչ մի պայման, միայն սիրոյ բացակայութիւն:  
Մնաք բարե (Քայլում է):

ՆԻՆԱ. Դու հեռանում ես բարկացած, առանց ինձ ձեռ  
մեկնելու:

**Լեհնն.** (Կանգ առնելով դուան մօտ), կեղծել չեմ սիրում։ ՆինԱ. Կեղծել։ Ուրեմն դու ինձ չես սիրել, այլապէս ալս աստիճան խիստ ու կոպիտ չէիր վարուիլ ինձ հետ։ (Ծըջուում է):

**Լեհնն.** Այս ամենը ինչի են պէտք այլ ևս. Մեր ծանօթութիւնը ճանապարհորդների ծանօթութիւն էր։ Ճանապարհին ծանօթացանք, զրուցեցինք, զուարճանանք ճանձրոյթից չը խեղդուելու համար, այժմ եկել է վայրկեանը, երբ մեր ճանապարհները պէտք է բաժանուեն։ Մնաք բարեւ։ (Գնում է):

**ՆինԱ.** (Ծըջուում, նայում է ետեւից. փոքր պառազա, ապա հեզնական)։ Հա, հա, հա, Գնաք բարեւ ու անդաբձ։ Կարծում է շատ մեծ հարուած իջաւ գլխիս։ Զեղ շատ լաւ գիտենք. Վերջացաւ համբոյըների շրջանը, կը խզուի և ամեն ծանօթութիւն։ (Քայլում է մտնածելով). Սակայն աւելի խոհեմ կը լինէր գործին այլ ընթացք տալ, քան այսպէս գրգուուած բաժանուել. Տղամարդու փառասիրութեամբ կարող է նա զրում հազարաւոր ստեր տարածել. Պէտք էր իսկապէս նրանից ազնիւ խօսք առնել, թէն վստահ եմ որ նա այդ աստիճան ստոր վարուել չի կարող. չէ՞ որ վերջապէս նա ինձ սիրում է։ (Քայլում է գնալու, դրանը հանդիպում է Լիոնորային):

**ԼիոնորԱ.** (Մտնում է), Լևոնը գնաց. Ինչպէս վերջացրիր։

**ՆինԱ.** Չեմ ուզում այլ ևս նրա մասին լսել.

**ԼիոնորԱ.** Ուրեմն ամեն ինչ ձեր մէջ մերջացած է։ Իսկ նա ինչպէս վերաբերուեց։

**ՆինԱ.** Նու, իսկապէս շատ ծանը դրութիւն է. ինձ ևս վատ ազդեց։ Սակայն ես ի՞նչ կարող եմ անել, թէ պայմաններն են աննպաստ, և թէ նա ինքը չի համապատասխանում իմ մտքին. Խնդրեց սպասել մինչև իր աւարտելը, բայց ես խօսք չը տուի։ Ինչո՞ւ զուր պարտականութիւն յանձն առնել, երբ ինքս անգամ հաստատ չը գիտեմ ինչ կարող է վաղը պատահել։ Իսկ մի օրիորդի դրութիւնը միշտ աւելի քան անորոշ է լինում։

**ԼիոնորԱ.** Ի՞ հարկէ չը պէտք է ի զուր խօսք տալ, երբ սէր չը կայ ձեր մէջ, բայց հետաքրքիր է, դու նրան պարզ 2եշտեցիր, որ նրան չես սիրում և չես սիրել։

**ՆինԱ.** Հասկանալի՞ է։

**ԼիոնորԱ.** Ազնուութիւնը այդպէս է պահանջում։ Այժմ ես գնամ. Ցը տեսութիւն։ Ազատ ժամանակ մտիր ինձ մօտ։ (Գնո՞ւմ է):

**ՆԻՆԱ.** (Ծանապարհելով): Ցը տեսութիւն: Երեկոյեան դէմ հաւանօրէն կը մտնեմ քեզ մօտ: Ցը, (դառնո՞ւմ է): Ա՛հ, հազիւ որ հանգստացանք այս կեղծ ազնուամիտներից: Սրանց ներկայութեամբ մարդ աւելի է ջղային դառնում: Լաւ է որ Հենրին այսօր ուշացել է, այլապէս սրանց ներկայութեան կատարեալ ձանձրալի կը լինէր: Այսպէս թէ այնպէս, ազատուեցինք այս կառնից և յուսով եմ այլ ևս նման խաղեր չի կրկնուիլ, թէ չէ, մի պայծառ օր կարելի է ցեխի մէջ խրուիլ: Վերջապէս ես ինքս էլ յոզնել եմ: Այսուհետև իմ վերջին նպատակը պիտի լինի միայն ամուսնութիւնը. Հենրիկն այս գէպըում շատ համապատասխան է.—գեղեցիկ, ջահել, ապահով, ինքն էլ ինձ այսչափ սիրում: Պէտք է լուրջ ուշադրութեան առնել: Ինչ այս պոչախ կիրուրային է վերաբերում, նա ոչ տեսանէ զնգիպառ, Հինրիկը նրա ճաշակի բանը չէ: Բայց ինչու Հենրիկն այսքան ուշանում է:

**ՄԻՐԱՅԻԼ.** (Ներս է մտնում ուրախ բացականչութեամբ): Բարեւ, կուզինա, բարեւ:

**ՆԻՆԱ.** Աա... Դու ես: Շնորհաւորում եմ, սրտանց շնորհաւորում:

**ՄԻՐԱՅԻԼ.** Գիտես արդէն: Այդ ժվ ասաց, քամին բերաւ:

**ՆԻՆԱ.** Ինքը էլզան: Նոր այստեղ էր:

**ՄԻՐԱՅԻԼ.** Շմա էր ուրախ, համ նա գտն է:

**ՆԻՆԱ.** Հանգիստ կաց. նա անչափ երջանիկ է:

**ՄԻՐԱՅԻԼ.** Իսկ ես, կուզինա: Զես կարող երևակայել ինչքան բախտաւոր եմ: Հազիւ որ կարողացայ յաղթել ամեն չար մտքերի ու առաջարկութիւն անելու վստահութիւն ստանալ:

**ՆԻՆԱ.** Ինչու էիր տատանում: Կարծում էիր կը մերժէ:

**ՄԻՐԱՅԻԼ.** Նկատնամ էի, ի հարկէ, միայն... նու, այսպէս թէ այսպէս հարցը այժմ գնոուած է: Բայց մօրաքոյրը լսել է:

**ՆԻՆԱ.** Իսկայն կասեմ. Կուզես դու ինքդ մտիր մօտը:

**ՄԻՐԱՅԻԼ.** Ոչ, ինձ ներիր, սիրահար մարդը ծերերի հետ զրուցելու հազիւ տրամադրութիւն ունենայ: Ես այժմ շտապում եմ էլզային տեսնելու:

**ՆԻՆԱ.** Այդչափ կարօտել ես:

**ՄԻՐԱՅԻԼ.** Քեզ լաւ յայտնի պիտի լինի, նինա, որ ամուսնութիւնը իմ ուղեղին մատչելի չէ եղել երբէք, իսկ եթէ այժմ ես յանդնում եմ ոտք դնել այդ ճանապարհին, միմիայն էլզայի համար, յանուն նրա սիրոյ: Ուրիշ ոչ մե հաշիւ չի առաջնորդում ինձ այստեղ:

ՆԻՆԱ. 50,000 բուբլին դրան վերադիր, ի հարկէ:

ՄԻՔԱՅԵԼ. Դու անարդար ես, Նինա: Ոչ մի հաշիւ նշանակութիւն ունենալ չի կարող: Ես սիրում եմ էլզային, հասկանում ես:

ՆԻՆԱ. Եւ ես ուրախ եմ: Այժմ գնում ես նրա ծնողների հետ խօսելու:

ՄԻՔԱՅԵԼ. Գնում եմ պաշտօնական համաձայնութիւն կայացնելու: Ցը տեսութիւն Բարեկիր մօրաքրոջ: (Գնում է):

ՆԻՆԱ. Ցը տեսութիւն: Երջանկութիւն եմ ցանկանում: (Մենակ): Բախտաւոր մարդիկ, ինքս էլ պէտք է խոստովանուեմ, որ էլզան անհամեմատ բարձր է Միքայէլից: Ի՞նչ կեանք ասես, որ Միքայէլը չի վարել: Սակայն ժամանակակից մը երիտասարդ բարձր է կանգնած: Ամենքն էլ իրար գերազանցում են: Խսկ Հենրիկը: Ես նրա մասին անհամեմատ բարձր կարծիքի եմ: Բայց ինչու նա չի գալիս: (Նայում է ժամացոյցին): Սովորական ժամը վաղուց անցել է: Վերջին օրերս նա շարունակ ինձ այցելում է և մենք համարեա անբաժան ենք անցնում: Իմ ազդեցութիւնը նրա վրայ շատ արագ ու ուժեղ է կատարուել, այլապէս ես Նինան չէի լինիր: Նա բժիշկ մարդու յատկութեամբ սառնասիրտ է գործում, սակայն ես այլ կրակ եմ, ինձ մօտ պէտք է կրակ կտրել: Եւ ես համոզուած եմ նրան այս երկու օրը իմ առջև ծունկ իշած ունենալ: Տեսնենք:

ԱՆՆԱ. (Մտնում է): Պարոն Հենրիկը:

ՆԻՆԱ. Խնդրիր:

ԱՆՆԱ. (Գնում է):

ՆԻՆԱ. Վերջապէս: Միրտս արոփնւմ է, կարծես այսօր սովորական այցելութիւն չը պիտի լինի:

ՀԵՆՐԻԿ. (Մտնում է): Բարեւ, օրիորդ Նինա, հազիւ ժամանակ գտայ ձեզ այցելելու այսօր, ինչքան էլ փափագելի էր այդ շուտ կատարել:

ՆԻՆԱ. (Սեղմելով ծեղող): Ցանկալի այցելութեան համար միթէ դժուարութեամբ են ժամանակ գտնում:

ՀԵՆՐԻԿ. Իմ վերաբերմամբ պէտք է ներողամիտ լինել, քանի որ իբրև բժիշկ, ստիպուած եմ նախ վերջացնել ընդունելութիւնս, ապա թէ շտապել ցանկալի տեսակցութեան: Խնչպէս էք:

ՆԻՆԱ. Շնորհակալ եմ: Նստէք, խնդրեմ: (Ժեղ է առաջարկում: Նստում են): Ուրախ եմ, որ ժամանակ էք գտնում մեղ այցելելու: Խսկապէս բժիշկները սահմանափակուած են.

որոշ պայմաններով, ուստի և նրանց կարելի է ներել, եթէ  
անուշադրութեան են մատնում ծանօթներին:

**ՀԵՆՐԻԿ.** Սակայն հչ ձեզ:

**ՆԻՆԱ.** Նոռ!

**ՀԵՆՐԻԿ.** Անջրւշտ, այլապէս այսչափ հաճոյքով չէի ոտք  
դնիլ ձեր տունը, ես այժմ իմ ժամանակի մեծ մասը ձեր  
ներկայութեան եմ անցնում, որի համար եւ անչափ շնորհա-  
կալ եմ:

**ՆԻՆԱ.** Հաճնիլի կոմպլիմենտներ:

**ՀԵՆՐԻԿ.** Եւ անկեղծ երկար ու բարակ հիւանդների  
հետ զբաղուելուց յետոյ, անպայման հաճելի է եւ հասարակու-  
թեան մէջ լինել, իսկ ձեր ներկայութեան, կրկնում եմ, կրկ-  
նակի հաճնիլի:

**ՆԻՆԱ.** Ուրախ եմ լսել:

**ՀԵՆՐԻԿ.** Այստեղ ես յարմարութիւն ունիմ զբաղուել  
հիւանդութիւններից դուրս եւ այլ հետաքրքեր խօսակցու-  
թիւներով, իսկ դուք զբաղեցնելու հօ երկնային շնորհք ունիք:  
ՆԻՆԱ. Նոռ, նոռ:

**ՀԵՆՐԻԿ.** Այս Այն մեծ շրջանը, որ դուք ձեռք էք բերել  
և ձեր ազդեցութիւնը այդ շրջանի վրայ, միմիայն այդ են  
ապացուցանում:

**ՆԻՆԱ.** Բայց ես մի գիւտ եմ արել: Որ բժիշկները միե-  
նոյն ժամանակ և լաւ սիրախօսել կարող են:

**ՀԵՆՐԻԿ.** Այդ աւելի քան անհրաժեշտ է բժիշկներին,  
երբ նրանք գործ ունին ամեն գոյնի հիւանդների հետ:

**ՆԻՆԱ.** Եւ դուք այսպէս վարպետ կերպով գործ էք  
դնում ձեր արհեստը:

**ՀԵՆՐԻԿ.** Երբ մի արտայայտութիւն անկեղծ զգացմուն-  
քից չէ բղխում, կեղծիքը իսկոյն նկատում է: Միթէ կեղծիք  
էք նկատում իմ մէջ:

**ՆԻՆԱ.** Ամենակին հչ խնդրեմ ձեր սրտի մօտ չընդունէք:  
ես ձեր մասին աւելի քան լաւ կարծիքի եմ:

**ՀԵՆՐԻԿ.** Այլապէս ես վիրաւորուած կը լինէի: Եթէ  
ասում եմ, որ ձեր ներկայութիւնը հաճոյքով եմ փնտում,  
խօսում եմ այդ բառի ամենանուրը իմաստով: Ի՞նչ բժշկու-  
թեան արհեստին է վերաբերում, այդ կողպում եմ առանձնա-  
սենակում, հենց որ վերջանում է հիւանդների ընդունելու-  
թիւնը: Սատանան չանչ, որ ես փորձեմ օգտուել կեղծաւորու-  
թեան հարբերով: Այդ իմ ճաշակի քանը չէ: Ես անկեղծօրէն  
խոստովանում եմ ձեր ազդեցութիւնը ինձ վրայ և վստահանում

եմ ամեն տեղ ձեր ներկայութիւնը փնտռել, հաւատացած որ այդ ձեզ անախորժութիւն չէ պատճառում:

Նինս. Ձեզ պարզ պիտի լինի իմ տրամադրութիւնը ձեր ներկայութեան:

Հենրիկ. Տրամադիր եմ ամեն երևոյթ յօգուտ ինձ բացատրել:

Նինս. Դուք, տղամարդիկդ, սիրում էք ամեն հաճելի ակնարկութիւն ձեր հասցէին կրկին ու կրկին լսել և ես չեմ կամենում զրկել՝ ձեզ այդ բաւականութիւնից, ուստի ասում եմ, որ ձեր այցելութիւնը, ձեր ներկայութիւնը ինձ միմիայն հաճոյք կարող է պատճառել (Թերթում է ալքօմը):

Հենրիկ. Երջանիկ եմ այդ լսել: Թերևս շատ ճիշտ էք նկատում, որ սարգու եսասիրութիւնը շոյւում է նման հաճելի կրկնութիւնների դիմաց, սակայն այդ անհրաժեշտ է չար թիւրիմացութիւնների տեղեք չը տալու համար, իսկ ինձ համար այդ կրկնակի հաճելիէ, քանի որ այդ ձեզնից դեռ ոչ մի անգամ չէի լսել:

Նինս. Սակայն պարզ նկատել:

Հենրիկ. Բայց լսել հարազատ ականջներով աւելի գերազանց է, քան միմիայն նկատել, քանի որ մանաւանդ թէ աշքերը յաճախ մոլորուել կարող են:

Նինս. Այդ դէպքում կարող եմ աւելացնել, որ անգամ ձեզ սպասում էի:

Հենրիկ. Ինչքան հաճելի է այդ լսել: Խօսք եմ տալիս ուրիշ անգամ ձեզ սպասել չը տալ:

Նինս. Սիրալի՛ր էք: Սակայն զանց շառնէք ձեր միւս պարտականութիւնները հիւանդների վերաբերմամբ:

Հենրիկ. Ամենամեծ պարտականութիւնը հրամայում է սեպհական հանգստութեան ու հաճոյքի համար գործել, ուստի և ոչինչ կարող է ինձ արգելել ամեն տեղ ձեր ներկայութիւնը փնտռել:

Նինս. (Հանում է ալքօմից Լեւոնի լրաանկարը, պատում ու բարկացած դէն շպրտում):

Հենրիկ. (Վերցնելով սեղանի վրայի կտորը): Ի՞նչ է: Լսոնի լուսանկմբը, ինչու էք պատռում:

Նինս. Աւելորդ է այստեղ:

Հենրիկ. Միթք:

Նինս. Զարմանմաւ էք:

Հենրիկ. Գոնէ լսածներիս համեմատութեամբ:

Նինս. (Հեղնական): Իսկ շմար բան էք լսել:

Հենրիկ. Որ նա ձեզ առաջարկութիւն է արել.  
 Նինս. Նուռու...: Այդ աստիճանու Տխմար հասարակութիւնն  
 Հասարակ ծանօթութիւնից այդպիսի եղբակացութիւնն:  
 Հենրիկ. Չարժէ ուշադրութեան առնել և վրդովուել:  
 Նինս. Իրաւացին էք, Մենք դադարենք նրա մասին խօսել:  
 Բայց ըստ երեսյթին դուք անարդար էք գտնում այս:  
 Հենրիկ. Պատուելը ես գտնում եմ խիստ:  
 Նինս. Նրա անունը ջնջուած է իմ ծանօթների ցանկից,  
 ինչու ուրեմն նրան չը փոխարինել մի ուրիշով:  
 Հենրիկ. Հետաքրքիր է մամուվ:  
 Նինս. ? !  
 Հենրիկ. Ինքս իմ մասին մեծ կարծիքի չեմ և ոչ էլ  
 վստահանում եմ կարծելու, որ ձեր մտքում կարող տեղ ունեմ  
 բռնած, այլապէս կը շտապէի գուշակել յօդուա ինձ:  
 Նինս. Դուք գուշակելու շնորհք էլ ունէք, կարող եմ  
 ձեղ ասել:  
 Հենրիկ. Ցիրաւթի:  
 Նինս. Դժբախտաբար ձեր լուսանկարից չ'ունեմ, այլապէս  
 կը համոզուէիք խկոյն:  
 Հենրիկ. Անչափ շնորհակալ եմ: Ինչով կարող եմ փոխա-  
 րինել այդ համակրանքին ու պատուին, որին արժանացնում  
 էք ինձ:  
 Նինս. Ձեր հաւատարիմ բարեկամութեամբ:  
 Հենրիկ. Բարեկամութեամբ միմիայն: Այդ անչափ ջնջին  
 է այն խորը զգացմունքի համեմատութեամբ, որ ես տածում եմ  
 դէպի ձեզ:  
 Նինս. Սակայն դուք դժգոհ էիք, երբ պատռում էի մի  
 աւելորդ նկար ձերով փոխարինելու:  
 Հենրիկ. Բայց արդեօք ձեր մտքում ու սրտում ևս կարող  
 կը լինեմ փոխարինել միւսներին:  
 Նինս. Ինչպէս է ձեզ ցանկալի:  
 Հենրիկ. Որ իմ դիմաց ձեր մէջ ամեն այլ յիշողութիւն  
 չքանայ: Միթէ պարզ չէ այս ձեզ համար, Նինս: Ուրիշ ինչ կա-  
 րող է ցանկալ սիրող մարդը, ոչ այլ ինչ, քան սիրած էակի մտ-  
 քում ու հոգում միմիայն իր պատկերը դրօշմուած փափագել: Ես  
 այս ցանկանում եմ, Նինս, ցանկանում ամբողջ սրտով, որովհետեւ  
 սա իմ երջանկութեան է վերաբերում, իմ սիրոյ զգացմունքին:  
 Իսկ ես սիրում եմ, սիրում քեզ, Նինս:  
 Հենրիկ. Պարոն Հեն-րիկ:  
 Հենրիկ. Խօսիր, Նինս, պատասխանիր: Ասմ որ այս  
 զգացմունքը փոխադարձ է մեր մէջ, որ ինձ սիրում ես:

ՆԻՆԱ. ?!

ՀԵՆՐԻԿ. Դու լռնամ ես: Միթէ ես մերժուած եմ:

ՆԻՆԱ. Ո...չ:

ՀԵՆՐԻԿ. Բախտաւա՞ր եմ, Նինա: (Վերցնում է ծեռը):

Սակայն ինչժամ չես խօսում: Ինչ ես խորհում այսպէս լուռ:

ՆԻՆԱ. Խորհում եմ այն երջանկութեան մասին, որ քեզանով պիտի ունենամ: Բայց...

ՀԵՆՐԻԿ. Բայց ինչ, Խօսիր:

ՆԻՆԱ. Միթէ բժիշկները սիրոյ տիրապետութեան բողեներին ևս մնում են պրոզայիկ:

ՀԵՆՐԻԿ. (Ծպտալով): Սիրոյ մասին խօսելիս ծաւնկ իջնել: Անա: (Ծունդ է իշնում): Ես քեզ սիրում եմ, Նինա, անչափ սիրում:

ՆԻՆԱ. (Վերցնելով Նրա գլուխը երկու ծեռների մէջ): Եւ դու երջանիկ կը լինես ինձ մօտ:

ՅՈՎՃ. ԲՈՉԻԵԱՆ

(ՎԱՐԱԳՈՅԻ)

(Կը շարունակուի)